

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ

Խոաշիա — Թրիխստի Վասն Հայրենեաց (Pro Patria) բարեգործական ընկերութեան լուծմոն լուրը, Խոալիա շատ վատ տպաւորութիւն գործեց: Կառավարութիւնը ժողովրդական յուզումներէ և ցցցերէ վախելով՝ փորթաց տեղեկութիւն ինդրեց Աւատրիոյ պաշտօնարանէն, որոյ չոր պատասխանն եղաւ, թէ այս Հաստատութիւնը այլ ես չէր մնացած իր յատուկ գործերու շրջանակին մէջ և թէ քաղաքական ծանրակշռ կերպարանք մը կրնար առնուլ. այս պատասխանը աւելի ես զայրացուց իտալացի հայրենասէր օրտերը, և իրենք ալ այժմյիրաւի սկսան տարակուսիլ հռչակաւոր երրակի գուշնակցութեան բարեկամսկան հազորդակցութեանց շարունակելուն վրայ Բան մը՝ զոր ամէն խելահաս մարդ արդէն խորհրդածեր էր Դաշնակցութեան առաջին օրը: Խոալիա որչափ ալ սաստիկ յուզեցաւ այս ան ակնկալ միջադէպին վրայ՝ սակայն ոչ նուռազ իրեն ուրախութեան և դռոզութեան ալ առիթ եղանք ամսոյս սկիզբը կատարուած նաւական փորձերը ։ Նաւատորմիդը երկու բաժնուած՝ թէ յարձակողականը և թէ՛ պաշտպանողականը՝ այնպիսի ճարտարութեամբ շարժեցան և կառավարուեցան՝ որ նոյն իսկ օտար ազգաց դեսպանաց քով գըտնուած նաւային սպայները՝ որք ներկայ գտնուեցան այս փորձերուն, շատ դրուատեցին:

Գերմանիա: — Գուլիէմոս՝ որ մշտնջենաւոր շաժման գժուարակներոն խնդիրը լուծեց՝ յետ այցելելու հուէտի և Անդզիոյ՝ այժմ պիտի դիմէ և ի Ռուսիա: Պաշտօնական լրագիրը ոմանք այս տեսակցութեանց մեծ կարևորութիւն կ'ընծայեն, սակայն սրբու այնչափ բազմացան և անցեալ ամաց տեսակցութիւնք այնչափ ապարդիւն մնացին՝ որ ո՛ւ է կարևորութիւն կորսնցուց, և պարզ հաճոյից համար եղած կը դատուի այժմ: Անդիսա յետ այնչափ տատամնելու, վերջապէս թողուց զչելիկունատ Գերմանիոյ. Գերմանիոյ կայսրը Գուլիէմոս՝ Լոնտրա այցելէն վերջը՝ գնաց ՚ի Հելկուանտ տեսնելու համար այս նոր ստացուածքը. վերջին օրերս՝ Անդզիական կառավարութիւնը մեծահանդէս արարողութեամբ պաշտօնական կերպով յանձնեց զկզին Գերմանական կառավարութեան: